



**ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ  
ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ**

**ՓԵՏՐՎԱՐ 2018 թ.**

**ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ  
ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ**

2018 թվականի փետրվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են տիֆեր, պարատիֆեր, սիբիրյան խոց, կատաղություն, խոլերա, ոհկետցիոզներ, փայտացում, դիֆթերիա, սուր պոլիոմիելիտ:

**Իմունականիսարգելում**

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2018 թվականի փետրվար ամսին հանրապետությունում արձանագրվել կարմրուկի 2 բերովի դեպք, որոնք համաճարակաբանորեն կապված են Ռուսաստանի և Ուկրաինայի հետ: Գրանցվել են նաև չպատվաստած և թերի պատվաստված երեխաների շրջանում կապույտ հազի 14 դեպք:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը փետրվար ամսին կազմել է 91.21% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 90.09% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 96.25% (նպատակային ցուցանիշը՝ 90%):


Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

**Հատուկ վրանգավոր վարակներ**

**Բրուցելոզ**

Նշված ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ և 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գտնվում են նույն մակարդակի վրա: 2018թ.

փետրվարի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 13 դեպք, որից 3-ը՝ Երևան քաղաքում, 4-ը՝ Արմավիրի, 3-ը՝ Արարատի, 1-ը՝ Սյունիքի, 1-ը՝ Կոտայքի, 1-ը՝ Արագածոտնի մարզերում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:



**Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվար-փետրվար ժամանակահատվածում արձանագրված բրուցելոզի դեպքերը**

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է **լեպտոսպիրոզ** հիվանդության 1 դեպք՝ Գեղարքունիքի մարզում: Իրականացվել է համաճարակաբանական և համապատասխան լաբորատոր հետազոտություն, ձեռնարկվել են հակահամաճարակային միջոցառումներ: Նշանակվել է բուժում:

**Սննդային թունավորումներ**


Հանրապետության տարածքում փետրվար ամսին արձանագրվել է սննդային թունավորման 5 դեպք՝ 5 տուժածով, առանց մահվան ելքի, որից բոտուլիզմի 3 դեպք՝ 3 տուժածով, սնկից թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով, և այլ մանրէային ծագման սննդային թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում թունավորման դեպքեր չեն արձանագրվել: Սննդային թունավորման դեպքերը արձանագրվել են քաղաք Երևանում, Լոռու, Վայոց Ձորի և Արմավիրի մարզերում: Բոտուլիզմի և այլ մանրէային ծագման սննդային թունավորման պատճառ է

հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված վարունգի մարինադը, կարմիր պղպեղը և տապակած սմբուկը, իսկ սնկից թունավորման պատճառ է հանդիսացել խանութից գնված պահածոյացված շամպինիոն սունկը: Սննդային թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

**Աղիքային վարակիչ հիվանդություններ**

Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի փետրվար ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 536 դեպք, որից 161 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 375-ը՝ մարզերում: 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.2 անգամ



**Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ փետրվարի ընթացքում արձանագրված վարակիչ աղիքային հիվանդությունների դեպքերը**

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

2018 թվականի փետրվար ամսին Հայաստանի հանրապետությունում աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

### **Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**


Հայաստանի Հանրապետությունում փետրվար ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշի նվազում (1.3 անգամ):

Սույն թվականի փետրվար ամսին արձանագրվել է արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի 4 դեպք: Վարակման հավանական պատճառները հայտնաբերվել են (անկանոն սեռական կապեր, ատամնաբուժական և այլ բժշկական միջամտություն ՌԴ-ում):

### **Օղակաթիլային վարակներ**

#### **Գրիպ և Սուր շնչառական վարակ**


2018թ փետրվար ամսին Հայաստանի մարզերում և Երևան քաղաքում արձանագրվել է ՍՇՎ-ով պայմանավորված հիվանդացության միջին ակտիվություն: 2018թ. փետրվար ամսվա ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակներով հիվանդության դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1 անգամ: 2018 թվականի փետրվարի հիվանդացության ցուցանիշը համեմատած 2017թ. նույն ժամանակահատվածի հետ աճել է 1.6 անգամ, 2016 թվականի հետ համեմատած 1 անգամ, պայմանավորված հիվանդության սեզոնայնությամբ, հանրապետությունում շրջանառող գրիպի և այլ սուր շնչառական վարակների հարուցիչների բազմազանությամբ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 0-4տ երեխաների շրջանում:



**2017-2018 թթ. հոկտեմբեր - փետրվար ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակներն՝ ըստ ամիսների, 100 000 բնակչի**

Փետրվար ամսվա ընթացքում գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդությունների և ծանր սուր շնչառական վարակների նկատմամբ հետազոտվել է 420 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպ Բ տեսակի 84 դեպք, գրիպի Ա տեսակի H1N1 ենթատեսակի 31 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է գրիպի Ա տեսակի H3 ենթատեսակի՝ 3 դեպք, գրիպի Բ տեսակի՝ 19 դեպք, ռինովիրուսի՝ 19, մետոպանմովիրուսի՝ 10, ռեսպիրատոր սինտիցիալ վիրուսի՝ 35 դեպք, պարագրիպի՝ 3 դեպք, բոկավիրուսի՝ 1, ադենովիրուսի՝ 5 դեպք:


**Այլ օդակաթիլային այլ վարակներ (ջրծաղիկ, քուրթեշ, վարակային մոնոնուկլեոզ) Ջրծաղիկ**



**Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018 թթ. ջրծաղիկ հիվանդության արձանագրված դեպքերը փետրվարի ժամանակահատվածում**

Համաձայն վերլուծության տվյալների, 2018 թվականի փետրվարին արձանագրված ջրծաղիկ դեպքերը համեմատած հունվար ամսվա հետ նվազել են՝ 1.2 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ՝ 1.3 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 0-14տ. երեխաների շրջանում, կազմակերպ հաստատություններում: Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորինս առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:


**Քույրեչ**



**Հայաստանի Հանրապետությունում 2017և 2018 թթ. քույրեչ հիվանդության արձանագրված դեպքերը փետրվարի ժամանակահատվածում**

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ 2018 թվականի փետրվարի ընթացքում արձանագրված քուբեշի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ գտնվում են նույն մակարդակի վրա, իսկ համեմատած 2017 թվականի միևնույն ժամանակահատվածի հետ աճել՝ 1.2 անգամ: Բոլոր դեպքերն արձանագրվել են 0-18տ. սակայն առավել շատ 3-6տ. երեխաների շրջանում՝ 37 դեպք, ինչը կազմում է ընդհանուր թվի 68.5%-ը: Բոլոր դեպքերն ենթարկվում են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

**Վարակային մոնոնուկլեոզ**



***Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018թթ փետրվարի ընթացքում. Վարակային մոնոնուկլեոզ հիվանդության արձանագրված դեպքերը***

2018թ փետրվարի ընթացքում արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ աճել են՝ 1.2 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ՝ նվազել 1.3 անգամ: Փետրվարի ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 40 դեպք, որից 31-ն՝ արձանագրվել է 0-18տ. երեխաների շրջանում:

Հանրապետության տարածքում փետրվար ամսին արձանագրվել է սննդային թունավորման 5 դեպք՝ 5 տուժածով, առանց մահվան ելքի, որից բոտուլիզմի 3 դեպք՝ 3 տուժածով, սնկից թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով, և այլ մանրէային ծագման սննդային թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում թունավորման դեպքեր չեն արձանագրվել: Սննդային թունավորման դեպքերը



արձանագրվել են քաղաք Երևանում, Լոռու, Վայոց Ձորի և Արմավիրի մարզերում: Բոտուլիզմի և այլ մանրէային ծագման սննդային թունավորման պատճառ է հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված վարունգի մարինադը, կարմիր պղպեղը և տապակած սմբուկը, իսկ սնկից թունավորման պատճառ է հանդիսացել խանութից գնված պահածոյացված շամպինիոն սունկը: Սննդային թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

### **Քիմիական թունավորումներ**

Հայաստանի Հանրապետությունում փետրվար ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 36.3%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 63.7%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը (33.3%) առաջացել է դեղամիջոցներով թունավորումներից, որի հիմնական պատճառ է հանդիսացել ինքնաբուժումը և ծնողի անուշադրությունը, 24.4%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, ինչը պայմանավորված է շմոլ գազով թունավորումների սեզոնային բարձրացումով, 3% թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 23.7%-ն՝ ալկոհոլային թունավորումները՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 8.2%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 3%-ը՝ թունաքիմիկատների թունավոր ազդեցությունից, 4.4%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2018 թվականի փետրվար ամիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատելիս, կարելի է դիտարկել, որ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.6 անգամ: